

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն ահազանգում է երեխայի առողջության համար կապարի վնասակարության մասին

Եկեք այսօր խոսենք կապարի մասին, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ մարդկանց, հատկապես երեխաների վրա և ինչու՞ կտրականապես հրաժարվել դրա հիմքով պատրաստված ներկերից: Կապարը շրջակա միջավայրում չափազանց տարածված բնական թունավոր մետաղ է: Այս քաղցկեղածին մետաղը և դրա միացությունները համարվում են պոլիտրոպիկ թույլներ, այսինքն՝ դրանք ներգործում են մարդու տարբեր օրգանների և համակարգերի վրա: Կապարն ամենամեծ վտանգն է ներկայացնում երեխաների համար: Պատահական չէ, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱԶԿ) կապարը նշել է որպես հանրային առողջության հիմնական մտահոգության 10 քիմիական նյութերից մեկը: ԱԶԿ հանրային առողջության և շրջակա միջավայրի հարցերով փորձագետի գնահատմամբ՝ կապարի ազդեցությունը տարեկան հանգեցնում է 143000 մահվան, ընդ որում՝ դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում զարգացող երկրներին: Երեխաների վրա կապարի ազդեցությունն ամեն տարի հանգեցնում է մտավոր զարգացման խանգարման մոտ 600000 նոր դեպքի, ընդ որում՝ այդ երեխաների 90 %-ը նույնպես ապրում է երրորդ աշխարհի երկրներում:

Կապարով թունավորումների նկատմամբ հատկապես խոցելի են փոքր տարիքի երեխաները, քանի որ նրանց օրգանիզմն իրենց քաշի համեմատ, 4-5 անգամ ավելի շատ կապար է կլանում, քան մեծահասակներինը: Հետաքրքրասիրության և այս տարիքում ձեռքերը դեպի բերանը տանելու սովորության պատճառով երեխաները հաճախ կուլ են տալիս կապարով աղտոտված հող, փոշի կամ շերտազատված կապարային ներկ: Ազդեցության այս ուղին նկատվում է հատկապես այն երեխաների մոտ, որոնք սննդի համար ոչ պիտանի իրեր ուտելու անհագ ցանկություն ունեն: Այդպիսի երեխաները, օրինակ, կարող են պատերից, դռների շրջանակներից և կահույքից քերել կապարային ներկը և ուտել: Կարևոր է իմանալ ու կապարով թունավորումը հեշտությամբ կարելի է կանխել: Կապարով թունավորումներից խուսափելու լավագույն ելքը բնակելի և (կամ) հասարակական շինություններին ներքին մակերեսների, կահույքային արտադրանքի, մանկական խաղահրապարակների, երեխաների և չափահասների համար Նախատեսված արտադրանքների և ատրակցիոնների ներկման համար պարունակող ներկերը ջրային հիմքով ներկերով փոխարինումն է: Կապարի հիմքով լաքաներկային նյութերի օգտագործման դեպքում կապարի պարունակությունը չոր նյութի հաշվով չպետք է գերազանցի 0,009%-ը:

- Մինչ օրս երկրների միայն 37 %-ն է սահմանել կապարի հիմքով ներկերի օգտագործման սահմանափակումներ: Հետևաբար, ավելի շատ ջանքեր են հարկավոր կապարային ներկերի արտադրությունը դադարացնելու:

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Կապարը ներկերում» ծրագրի շրջանակում:

